CV կազմելու առաջին քայլն է պարզել՝ որոնք են այն զբաղմունքները, պաշտոնները, աշխատանքները, որոնց համար դու ունես թե՛ համապատասխան որակավորում, փորձառություն, թե՛ հետաքրքրվածություն: Ծանոթացի՛ր թափուր հաստիքի մասին հայտարարությանը, առանձնացրո՛ւ այն պահանջները, որոնք ներկայացված են քեզ հետաքրքրող պաշտոնի նկարագրում և դրանք համադրիր քո գիտելիքների, կարողությունների, փորձառության և որակավորումների հետ: Առավելագույն համընկնում ունենալու դեպքում միայն դիմիր: CV-ի բովանդակությունը պետք է համոզի գործատուին, որ դու ունես անհրաժեշտ հմտությունները և փորձը տվյալ աշխատանքը կատարելու համար և արժանի ես, որ քեզ հրավիրեն աշխատանքային հարցազրույցի:

Ի դեպ, որոշ մասնագիտությունների դեպքում CV-ին կից անհրաժեշտ է կազմել աշխատանքային պորտֆոլիո: Սա այն դեպքում, երբ տվյալ մասնագիտությամբ քո փորձառությունը ցույց տալու լավագույն միջոցը կատարած աշխատանքների նկարներն են, ինչպես օրինակ՝ խոհարարի, նկարչի, ատաղձագործի, դիզայների, ծրագրավորողի և այլ մասնագիտությունների դեպքում:



*Դե ինչ, փորձե՛նք միասին հասկանալ՝ որոնք են գործատուի «սիրտը» գրավելու հիմնական պահանջները:*

Խոսքից անցնենք գործի: Ստորև տես CV կազմելու ամենատարածված (EUROPASS) ձևաչափերից մեկը:

<table>
<tr><td>ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ</td><td>Անուն, Ազգանուն<br>Հասցե<br>Հեռախոսահամար/Բջջային հեռախոսահամար<br>Էլ.փոստի հասցե<br>Սեռը ____ | Ծննդյան օր/ամիս/տարի | Ազգությունը ________</td></tr>
</table>

<table>
<tr><td>ԱՅՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ԵՍ</td><td>Այս հատվածում լրացնել այն աշխատատեղի անվանումը, որի համար դիմում եք</td></tr>
</table>

<table>
<tr><td>ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</td><td>Այս հատվածում լրացրու քո այն ուժեղ կողմերը, որոնք գործատուն կկարևորի տվյալ թափուր աշխատատեղի համար:<br>Օրինակ՝<br>Ունեմ գիտելիք ..... մասին<br>Տիրապետում եմ ....հմտությունների<br>Ունեմ ...տարվա փորձառություն ... գործում<br>Կարող եմ .... անել<br>Կարող ես կցել քո պորտֆոլիոն (կատարած աշխատանքները նկարներով):</td></tr>
</table>

<table>
<tr><td>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ</td><td>[Յուրաքանչյուր աշխատանքի համար ավելացնել առանձին նմանատիպ սյունակ և լրացնել: Սկսել վերջին աշխատատեղից:]</td></tr>
<tr><td>Ամսաթիվը (սկիզբ - վերջ)</td><td>Լրացնել զբաղմունքը կամ պաշտոնը<br>Լրացնել գործատուի անունը և հասցեն (հնարավորության դեպքում՝ լրիվ հասցեն և վեբկայքը)<br>Լրացնել հիմնական գործառույթներն ու պարտականությունները<br>Լրացնել աշխատանքային գործունեության ոլորտը</td></tr>
</table>

<table>
<tr><td>ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ</td><td>[Յուրաքանչյուրի համար ավելացնել առանձին նմանատիպ սյունակ և լրացնել: Սկսել վերջին կրթությունից կամ ուսուցումից:]</td></tr>
<tr><td>Ամսաթիվը (սկիզբ - վերջ)</td><td>Լրացնել ստացած որակավորումը<br>Լրացնել մասնագիտական կրթության և/կամ ուսուցման հաստատության անվանումը և հասցեն (հնարավորության դեպքում՝ լրիվ հասցեն և վեբկայքը)<br>Լրացնել ուսումնասիրած մասնագիտական առարկաները և/կամ զարգացրած կարողությունները</td></tr>
</table>

<table>
<tr><td>ԱՆՁՆԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</td><td colspan="5"></td></tr>
<tr><td>Մայրենի լեզուն(ները)</td><td colspan="5">Լրացնել մայրենի լեզուն(ները)</td></tr>
<tr><td rowspan="2">Օտար լեզու (ներ)</td><td colspan="2">ՀԱՍԿԱՆԱԼ</td><td colspan="2">ԽՈՍԵԼ</td><td>ԳՐԵԼ</td></tr>
<tr><td>Լսել</td><td>Կարդալ</td><td>Խոսել ինտերակտիվ</td><td>Հաղորդակցվել</td><td></td></tr>
<tr><td rowspan="2">Նշել լեզուն</td><td>մակարդակ</td><td>մակարդակ</td><td>մակարդակ</td><td>մակարդակ</td><td>մակարդակ</td></tr>
<tr><td colspan="5">Նշել լեզվի որակավորման մակարդակը</td></tr>
<tr><td rowspan="2">Նշել լեզուն</td><td>մակարդակ</td><td>մակարդակ</td><td>մակարդակ</td><td>մակարդակ</td><td>մակարդակ</td></tr>
<tr><td colspan="5">Նշել լեզվի որակավորման մակարդակը</td></tr>
<tr><td></td><td colspan="5">Յուրաքանչյուր մակարդակի տողում նշել Ձեր գնահատմամբ տվյալ օտար լեզվի իմացությունը 1-5 բալային սանդղակով, որտեղ 5-ը գերազանց իմացությունն է, 1-ը՝ տարրական իմացությունը:</td></tr>
</table>

<table>
<tr><td>Համակարգչային հմտություններ</td><td>Լրացնել համակարգչային հմտությունների մասին:<br>Օրինակ՝<br>MS office ծրագրերի լավ իմացություն</td></tr>
</table>

<table>
<tr><td>ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ<br>Մասնակցություն սեմինարների<br>Անդամակցություն<br>Երաշխավորություններ<br>Հավաստագրեր<br>Վարորդական իրավունք</td><td>Լրացնել այն հատվածները, որոնց մասով ունես փաստեր՝ նշելով տարեթիվը, վայրը և այլ մանրամասներ:</td></tr>
</table>

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

| | |
|---|---|
| ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ | Սեռը ____ \| Ծննդյն օր____/____/____ \| Ազգությունը __________ |

| | |
|---|---|
| ԱՅՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ԵՍ | |

| | |
|---|---|
| ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | |

| | |
|---|---|
| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ | |
| | |

| | |
|---|---|
| ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ | |
| | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ԱՌԱՆՁՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | |
| Մայրենի լեզուն(ները) | | | | | |
| Օտար լեզու (ներ) | ՀԱՍԿԱՆԱԼ | | ԽՈՍԵԼ | | ԳՐԵԼ |
| | Լսել | Կարդալ | Խոսել ինտերակտիվ | Հաղորդակցվել | |
| | | | | | |
| | | | | | |
| Համակարգչային հմտություններ | | | | | |

| | |
|---|---|
| ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ<br>Մասնակցություն սեմինարների<br>Անդամակցություն<br>Երաշխավորություններ<br>Հավաստագրեր<br>Վարորդական իրավունք | |




Թափուր աշխատատեղին դիմելու համար հաճախ CV-ից բացի պահանջվում է ուղեկցող նամակ, որը գործատուի մոտ ստեղծում է քո մասին առաջին տպավորությունը: Ուղեկցող նամակը պետք է գրել կոնկրետ թափուր աշխատատեղի համար դիմելիս, քանի որ այն պետք է ներկայացնի քեզ որպես լավագույն թեկնածու հենց այդ աշխատանքի համար:

Ուղեկցող նամակը պետք է բաղկացած լինի երեք պարբերությունից.

1 **Ներկայացում -** նշի՛ր պաշտոնը, որի համար դիմում ես և թե ինչպես ես իմացել այդ աշխատանքի մասին (անձ, կազմակերպություն, վեբկայք և այլն):

2 **Հիմնական մաս -** ընդգծի՛ր քո հիմնական որակավորումները, հմտություններն ու փորձը, որոնք վերաբերում են այդ աշխատանքին (անդրադարձիր, բայց մի կրկնիր CV-ում նշված փաստերը, այլ ապացուցիր, բեր օրինակներ): Ցու՛յց տուր քո վերաբերմունքը, անհատականությունը, ոգեշնչման աղբյուրները, խանդավառությունը և հաղորդակցվելու հմտությունները:

3 **Փակում -** առաջարկիր հարցազրույց ունենալ, ինչպես օրինակ՝ «Ուրախ կլինեմ՝ դիտարկեք իմ թեկնածությունն այս պաշտոնի համար: Իմ փորձառությունը կարող եմ ներկայացնել հարցազրույցի ժամանակ»:

Ցուցումներ. Ուղեկցող նամակը պետք է լինի շատ հակիրճ, ոչ ավելի քան 150 բառ: Մի՛ պատմիր քո կյանքի մասին պատմություններ, այլ ապացուցիր, որ հենց դու ես համապատասխանում գործատուի պահանջներին, հետաքրքրված ես այդ ընկերությունում աշխատել, ունես անձնային բարձր որակներ, հաղորդակցվող ես և թիմային աշխատող, պատրաստակամ ես փորձառությունդ ներդնել՝ ի նպաստ գործի և ընկերության հեղինակության բարձրացման: Խուսափի՛ր «ես» դերանվան չափազանց շատ կիրառումից:

**Հաջող աշխատանքային հարցազրույց**

Եթե հարցազրույցի հրավեր ես ստացել, ուրեմն առաջին փուլը հաղթահարված է: Պետք է գործատուի վստահությունը ստանալ հարցազրույցի ժամանակ:
Հարցազրույցը հաղորդակցման մի ձև է, որը գործատուին հնարավորություն է տալիս հանդիպման և կարճ զրույցի միջոցով կարծիք կազմել աշխատանքի համար դիմած թեկնածուի անձնային և մասնագիտական որակների մասին:



Հիշի՛ր, հարցազրույցի ժամանակ առաջին տպավորությունը ստեղծվում է քո արտաքին տեսքից, պահվածքից և հագուկապից: Ուստի, կարևոր է ոչ միայն քո խոսքը, այլև հագուստի, արդուկվարդի, սանրվածքի, անգամ օծանելիքի ընտրությունը:

Ընտրի՛ր նուրբ գույներով, հարմար, առօրյա աշխատանքային հագուստ, եղի՛ր կոկիկ և սիրալիր:

Զրույցի ժամանակ խուսափի՛ր երկարաշունչ նախադասություններից, հարցերին պատասխանիր կարճ և հստակ:

Հարցազրույցին պետք է նախապատրաստվել: Նախ, տեղեկատվություն հավաքել ընկերության, մրցակիցների, թափուր աշխատատեղի, ոլորտի զարգացման միտումների մասին:
Պատրաստ լինելու համար առաջարկում ենք ծանոթանալ հարցազրույցի ժամանակ հաճախ տրվող հարցերին:

Ինչն է Ձեզ գրավում մեր ընկերությունում (առաջարկվող աշխատանքում):

Ո՞րը կլինի Ձեր ներդրումը ընկերության մեջ:

Ի՞նչ նոր նախաձեռնություն կունենաք աշխատանքի ընդունվելու դեպքում:

Ինչպիսի՞ն էր Ձեր առօրյա աշխատանքային օրը նախկին աշխատավայրում:

Ինչո՞ւ հենց Ձեզ պետք է ընդունենք տվյալ աշխատանքին:

Ո՞րն է եղել աշխատանքային գործունեության ընթացքում Ձեզ հանդիպած ամենալուրջ խնդիրը:

Դուք ավելի շատ գերադասում եք աշխատել միայնա՞կ, թե՞ թիմով:

Ի՞նչ եք կարծում Ձեր նախկին վերադասը Ձեր մասին ինչպիսի կարծիք կհայտնի:

Ի՞նչն էր Ձեզ հատկապես դուր գալիս Ձեր նախկին աշխատավայրում:

Ի՞նչը Ձեզ հատկապես դուր չէր գալիս Ձեր նախկին աշխատավայրում:

Ինչո՞վ եք սիրում զբաղվել ազատ ժամանակ:

Որո՞նք են Ձեր ուժեղ և թույլ կողմերը:

Ինչո՞ւ եք Ձեր նախկին աշխատանքից ազատվել:

Որտե՞ղ եք տեսնում Ձեզ հինգ տարի անց:

Որքա՞ն աշխատավարձ եք ակնկալում ստանալ: